ւալանը՝ «մատանին պատկերեալ և գօտին աշխատասէր միջոյն.» այս սրբութիւնները Զորոյ վանքից անցել էին Աղթամար՝ որտեղից և փոխադրուեցան Հռոմկլայ։ Եթէ սոցա վերայ աւելացնենք և Ստ. Օրպէլեանի յիշած «աթոռը» (Գլ. ԿԷ.)՝ այն ժամանակ կը տեսնենք՝ որ ԺԲ. դարում Հռոմկլայի կաթուղիկոսարանում պահւում էին Ս. Լուսաւորչի Աջը՝ գաւազանը՝ մատանին՝ գօտին՝ պատարագամատոյց սեղանը՝ աթոռը՝ և «այլ նշխարներ։» Միւս սրբերի մասունքներ և այլ տեսակ սրբութիւններն էս պակաս չէին այնտեղ՝ որոնց մէջ՝ անշուշտ՝ նշանաւոր են առաքելական նշխարները՝ կենաց փայտը (Ս. Նշան)՝ Ս. Հռիփսիմէի հողաթափը՝ շղարշը և այլն։ 1292 թուին Հռոմկլան ընկաւ Եգիպտացւոց ձեռքը՝ որոնք գերի վարեցին Ստեփաննոս Դ. կաթուղիկոսին և աւար առան ամբողջ հայրապետանոցը. «Կապտեցին կողոպտեցին՝ ասում է ժամանակակից պատմիչն Ստ. Օրպէլեան՝ զամենայն սպաս եկեղեցւոյն և զանկշռելի գանձն աստուածային և զամենայն ստացուածսն»։ Գերի տարուեցան Եգիպտոս «փառաւորագոյնն մերոյս գրոհի աջ սրբոյն Գրիգորի Լուսաւորչի» և այլ սրբութիւնները։

Մելիք Աշրաֆ սուլթանը խեղճ կաթուղիկոսին տարաւ իւր հետ երկաթի կապանքներով և շղթայեցնում՝ ցոյց էր տալիս նորան երևի՝ իբրև նը-